

նագիրներին փոխ է առած, այլ ասոնք իրմէ, եւ թէ 678 թուականէն շատ յառաջ Խորենացույ պատմութիւնը կայր» (ՀԱ, 1898, դեկտեմբեր):

Այս կարգի հաղորդումները, բնական է, նորից ու նորից ուշադրութիւն են բեւեռել խորենացիագիտութեան հարցերի վրայ, հիմք եւ ուղեցոյց են դարձել նոր ուսումնասիրութիւններին եւ, վերջին հաշուով, նպաստել Խորենացու տեղեկութիւններին ճիշտն ու անճիշտը յայտնաբերելու գործին: Մի խօսքով, «Հանդէս ամսօրեայ»-ն ամէն ինչ արել է խորենացիագիտական հաւասարագոր եւ բարձր մակարդակի բանավէճ ծաւալելու համար՝ բնաւ չխորշելով, որ իր իսկ տպագրած այս կամ այն կարծիքին հակադրել է բոլորովին հակառակ կարծիք կամ տեսակէտ: Այսպիսին է «Հանդէս ամսօրեայ»-ի, այսպէս ասած, խորենացիագիտական գործելա-

կերպը՝ գիտականօրէն իրօք ճիշտ եւ ուսանելի գործելակերպ:

Եւ առհասարակ 100-ամեայ գործունէութեան ամբողջ ժամանակաշրջանում «Հանդէս ամսօրեայ»-ն կանգնած է եղել գիտականութեան բարձր դիրքերում, անընդհատ ծաւալել է գիտական սուր բանավէճեր եւ ընթացել ճշմարտութիւնները յայտնաբերելու դժուարագնաց ճանապարհով:

Ողջունելով «Հանդէս ամսօրեայ»-ի դարադարձը. ցանկանք նրան նոր դարերի երկարակեցութիւն եւ նոր մաքառումներ ու ներդրումներ հայագիտութեան ասպարէզում:

25 մարտի 1987. թ., Երեւան

ԼԵՒՈՆ ՇԱՀԻՆԵԱՆ

(Պատմական գիտութիւնների քեկեանու, դոցեմտ)

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-Ն ԵՒ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Մի հանդէս, որի նպատակն էր լինել «ձեռնտու՝ Ազգին մտաւոր եւ բարոյական հարբատութիւնն յաճախելու» եւ որի կոչումն էր նըպաստել հայ ժողովրդի պատմութեան ու մշակոյթի ուսումնասիրութեան գործին, չէր կարող անտարբեր մնալ հայ մատենագրութեան դէմքերից մէկին՝ Ներսէս Շնորհալու գրական ժառանգութեան նկատմամբ, մանաւանդ որ նրա ստեղծագործութեան մէջ անդրադարձումն է գտել եւ՝ հայոց պատմութեան, եւ՝ դաւանանքի ու գաղափարական պայքարի, երաժշտական արուեստի ու գրականութեան, գրական լեզուի, նաեւ առաւել երկրորդական, ասեմք, տաղաչափութեան, բազմաթիւ խնդիրներ, հարցադրումներ: Ուստի բնական է, որ Շնորհալուն վերաբերող արժէքաւոր նիւթեր ու դիտարկումներ կարելի է գտնել ոչ միայն հայոց միջնադարեան գրականութեան, այլեւ պատմութեան տարբեր խնդիրներ արծարծող հետազոտութիւններում, հնագիտական, ազգագրական յօդուածներում, գրախօսականների մէջ, ձեռագրացուցակներում: Այսպէս, Շնորհալուն վերաբերող արժէքաւոր դիտողութիւններ են պարունակում բելգիացի հայագէտ Ֆելիքս Նեւի «Հին Հայաստանը եւ նրա գրականութիւնը» աշխատութեան մատենախօսականը, «Ստոյն Կալիսթենեայ Վարուց Աղեքսանդրի ուսումնասիրութիւնը» (Հ. Յ. Տաշեան), «Արեւը հայ սիրութիւնը» (Մ. Պապիկեան), «Հայոց կաթողիկոսական աթոռին բարձումը 11-րդ դարուն երկրորդ կիսուն» (Հ. Պերպերեան) յօդուածները եւ այլն: «Ծովքի կաթողիկոսարանը» յօդուածի հեղինակը (Բ.) մասնաւորապէս նկատում է. «Շնորհալույն տաղերը շատ արժէքաւոր են եւ աշխարհագրական անվիճելի ճշդութիւն մ'ունին, որուն դժբախտաբար բնաւ ուշադրութիւն չեն ըրած անոնք, որ Ծովքը մինչեւ Խարբերդ կամ Արղնի կը տանին»¹:

Հետեւելով եւրոպական հայագիտութեան նորութիւններին, «Հանդէսը» դրանցից կարեւորագոյնները ծանօթացնում է իր ընթերցողներին՝ թարգմանաբար, նկարագրօրէն կամ գրախօսութեամբ: Այս առումով մեզ համար կարեւոր է Պ. Ֆետտերին նուիրուած հաղորդումը (Հ. Յ. Տաշեան): Գերմանացի հայագէտի յօդուածը տպագրուել է Տիւբինգէնի աստուածաբանական եռամսեայ հանդէսի մէջ «Ողբերգութիւն Ս. Գրոց՝ կաթողիկոսին Հայոց Ներսիսի Դ. Շնորհալույ» (1898, Ի. II, S. 239-276), որտեղ ներկայացուած է կենսագրութիւնը) օգտուել է Հ. Լ. Ալիշանից), «Յիսուս Որդի» իր խօսքով՝ «մեծագոյն ողբերգութեան» վերլուծութիւնը եւ մասնական թարգմանութիւնը գերմաներէն: Հակառակ իր նախորդների, մասնաւորապէս Յակոբոս Վիլլոտի, որ այն անուանում էր, «ճշմարտիւ աստուածային գիրք», Պ. Ֆետտեր շատ խիստ չափանիշներով է մօտենում քերթուածին, առանց որեւէ վերապահութեան, առանց պատմական հայեացքի, նորորեայ «եւրոպացույ մը ճաշակին համեմատ», առարկելով ուրիշներին, որ բարձր են գնահատել այդ երկը: Ի հարկէ, գնահատութեան այս եղանակը սկզբունքի խնդիր է, եւ՝ կարելի է վիճել, առարկել: Բայց խստագոյն ցուցաչափով թերիններ մատնանշելով հանդերձ Ֆետտեր շատ բարձր գնահատական է տալիս ողբերգութեան:

«Նրկասիրութեանս գեղեցկութիւնը, — գրում է նա —, կապուած է գլխաւորաբար այն պարագային հետ, որ Ներսէս մեծ ճարտարութեամբ կը գործածէ հայերէն լեզուն. իւր տաղերուն մէջ հայերէնը ճշմարիտ գեղեցիկուն ներդաշնակութիւն մը կը ցուցնէ: Ուստի ողբերգութեանս հարգատու եւ ճշմարիտ արժէքը կը ընդունու համար անհրաժեշտ է անոր սկզբնագիր լեզուին հմուտ ըլլալ: Նրբ գեղարուեստական երկս օտար լեզուի մը թարգմանուի, մանաւանդ եւրոպական նորագոյն լեզուի մը՝ որ բացատրութեան սեղմութեան եւ ճշգրտութեան, ինչպէս նաեւ ձեւերու ճոխութեան մասին ամենեւին իսկ չի կրնար մրցութեան բերուել հին հայերէնի հետ, այն ժամանակ սկզբնագրին երկնագեղ կենդանութիւն»:

¹ «Հանդէս Ամսօրեայ», 1902, էջ 217:

Բարթիկեան, զինուած ապստամբութեան բնոյթ չէր կրում: Այդ իսկ պատճառով Ներսէս Ծնորհալիի համար միեւնոյն էր՝ Արեւորդիք ուղղափառ քրիստոնեայ կը դառնան, թէ ոչ: Նրանք ընկերային վտանգ չէին ներկայացնում ոչ թուաքանակով, ոչ իրենց շարժման բնոյթով»²⁰: Աւելին, նրա կարծիքով Ծնորհալիին ներողամիտ է, որովհետեւ նրանք եկել են կամովին, եւ իրաւացի՝ երբ գրում է. եթէ ետ կանգնեն իրենց խնդրանքից եւ չմտնեն հայ եկեղեցու հովանու տակ, դրանից մեզ վնաս չկայ: Այս բացատրութիւնը մեզ համոզիչ չի թւում: Թերեւս աւելի ճիշտ կը լինէր Ծնորհալու մեղմ վերաբերմունքը բացատրել նրա մեղմ բնաւորութեամբ:

Հր. Բարթիկեանը սպառիչ բացատրութիւն է տալիս արեւի պաշտամունքի վերաբերեալ: Նա ցոյց է տալիս, որ թէեւ Արեւորդիների դաւանանքում կան հեթանոսութեան մնացուկներ, որոնք բոլորովին նոր բովանդակութիւն են ձեռք բերել, այնուհանդերձ, նրանք (Արեւորդիք) ոչ թէ հեթանոս են, այլ քրիստոնեայ աղանդաւոր, որ արեւը աղանդաւորների համար Քրիստոս էր, արեւն անուանում էին Քրիստոս, նոյնացնում էին այդ երկու հասկացութիւնները: Այսպէս հասկանալի է դառնում Ծնորհալու յորդորը՝ սովորեցնելու Արեւորդիներին՝ այլ բան չհամարել արեւը, քան սովորական լուսատու:

Արեւորդիներին վերաբերող վէճերին ինչ-որ չափով պատասխան տալու հնարաւորութիւն է ընձեռում մեզ նաեւ Միմէոն Լեհացու Ուղեգրութիւնը, որ դժբախտաբար վրիպել է ուսումնասիրողների ուշադրութիւնից: 1934 թ. «Հանդէսում» տպագրուած այդ երկը յատուկ գլուխունի «Արեւորդիք» վերնագրով:

Միմէոն Լեհացին պատմում է, որ մի «պէկէր պէկի», իմանալով, որ Արեւորդիները իրենց աղօթաւայրում նաեւ պիղծ գործեր են կատարում, կանչում է նրանց. «Եւ ազդեցին թէ սոքա նամազ չունին, ոչ հայ են, ոչ Չհուտ, ոչ հոռոմ. միայն հայնակ կու գրուցեն»:

Այս եւ նոյնանման տեղեկութիւնների մէջ, անշուշտ, խօսքը ոչ թէ ազգութեան, այլ հաւատին է վերաբերում: Հաւատով Արեւորդիները «ոչ հայ են, ոչ Չհուտ, ոչ հոռոմ», բայց լեզուով հայ են: Եւ անտեղի էր, ուրեմն, Գր. Վանուով հայ են: Եւ անտեղի էր, ուրեմն, Գր. Վանուով հայ են: Եւ անտեղի էր, ուրեմն, Գր. Վանուով հայ են:

ցեանի պնդումը, թէ Արեւորդիները հայ չեն եղել:

Մահմետական իշխանաւորի «Զինչ հաւատ ունիք դուք» հարցին Արեւորդիները պատասխանում են, որ հայ են, նա հրամայում է գնալ հայոց եկեղեցի, եթէ ոչ՝ մեջիտ, սպառնալով հակառակ դէպքում կոտորել նրանց: Եւ նրանք «սկսան աղաղակել եւ կաշառք տւեալ յանձն առին գնալ Հայոց եկեղեցին. ապա թոյլ ետ նոցա. եւ սաստիկ հրաման եհան, թէ ոք չգնայ մալն թագաւորի, գլուխն հատցի»²¹: Այնուհետեւ Արեւորդիները ցիրուցան են լինում, «Եւ որք մնացին անդ ահէ եւ յերկիւղէ վարձէին գոմն հայ, թէ՛ ինձ համար գնա եկեղեցի. եւ ոմանք նօպաթով եւ կարգաւ գնացին ժամ շաբթէ շաբաթ, եւ զայն՝ ակամայ, որպէս Հրեայքն Հոռոմոց եկեղեցին»²²:

Միմէոն Լեհացու խօսքով հասկանալի է դառնում, թէ ինչն էր դրդել Արեւորդիներին դիմելու Ծնորհալուն եւ ցանկութիւն յայտնելու մտնել հայ եկեղեցու հովանու տակ: Միւս կողմից սրանով հաստատուում են Ներսէս Ծնորհալու կասկածները՝ հայ եկեղեցուն միանալու նրանց ցանկութեան անկեղծութեան վերաբերեալ:

Ներսէս Ծնորհալու ստեղծագործութեան առնչուող հրապարակումներից ու հաղորդումներից արժէ յիշել Պ. Սամուէլեանի, «Ներսէս Ծնորհալու անձանօթ մէկ տաղը ս. Աստուածածնի ցաւոց վրայ»²³: Մի այլ դիտողութեամբ ընդգծում էր, որ Ստեփանոս Միւնեցուն վերագրուած «Ճառագայթ փառաց Հօր Որդի միածին» տողով սկսող շարականի հեղինակը Ներսէս Ծնորհալին է²⁴: Աւելի չուտ՝ ամսագրում հանդէս է եկել Ն. Ակիմեան՝ «Ս. Ներսէս Ծնորհալու Գովեստ ի Ս. Աստուածածինն, ի խնդրոյ մեծին Թորոսի», եւ հրապարակել տաղի յորդորակը, օգտուելով Վիեննայի Միսիթարեան մատենադարանի թ. 372 ձեռագրից, արիստանք յայտնելով, որ ժամանակին չի հասցրել ընդօրինակել երեւանեան ձեռագրում պահ-

²¹ «Հանդէս Ամսօրեայ», 1934, էջ 167:
²² Անդ:
²³ Տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1910, էջ 374-377:
²⁴ Տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1973, էջ 103-104:
 Հմմտ. Ն. Թահմիզեան, Ներսէս Ծնորհալին երգահան եւ երաժիշտ, Երեւան, 1973, էջ 39:

²⁰ Հր. Բարթիկեան, նշու. աշխ., էջ 107:

պանուած ամբողջական տաղը²⁵, որ, ինչքան մեզ յայտնի է, չի տպագրուել նաեւ յետագայում:

«Հանդէս Ամսօրեայ» բազմաթիւ այլ առիթներով նոյնպէս շօշափել է Ներսէս Ծնորհալու

²⁵ «Հանդէս Ամսօրեայ», 1947, էջ 46-49: Հմմտ. Ա. Քէօշկերեան, Ներսէս Ծնորհալու նորայայտ տաղերի եւ հատուած-տաղերի մասին. «Ներսէս Ծնորհալի» (ժողովածու), Երեւան 1977, էջ 143-144:

ժառանգութեան հարցերը, տպագրել ուսումնասիրութիւններ, հրապարակումներ, իր ծանրակշիռ նպաստը բերել հայոց պատմութեան, գրականութեան ու արուեստի մէջ մեծ բանաստեղծի, երգահանի, հոգեւոր-հասարակական գործչի ստեղծագործութեան արժեքաւորման գործում, որ ի վերջոյ ծառայել է հայագիտութեան ընդհանուր առաջընթացին:

ԱՄՇԱԿ ՄԱՌՈՅԱՆ